

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4-ը սեպտեմբերի, 2005թ.

[համառոտ հաշվետվություն, 5-րդ հետազոտություն]

Օգոստոսի 29-ից սեպտեմբերի 1-ը ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցավ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների շուրջ քննարկումներն ու երկրորդ ընթերցմամբ քվեարկությունը, որն ամբողջությամբ ցուցադրվում էր հեռուստատեսային ուղիղ եթերով: Ավարտվեց ծրագրվող սահմանադրական բարեփոխումների եւ սահմանադրական հանրաքվեի շուրջ քննարկումների եւս մեկ փուլ:

Ինչպես հայտնի է, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների փորձ արվել էր 2003թ.: Մինչդեռ սահմանադրական փոփոխությունների նախագիծը քվեարկությամբ չստացավ Հայաստանի քաղաքացիների անհրաժեշտ աջակցությունը:

Որքանով են մեր քաղաքացիներն իրազեկված սահմանադրական փոփոխությունների ներկայիս նախաձեռնությունը, արդիակա՞ն է արդյոք այս նախաձեռնությունը հասարակության համար, ընտրելու իրավունք ունեցող մեր քաղաքացիների ո՞ր հատվածն է պատրաստակամ մասնակցել հանրաքվեի քվեարկությանը: **Ի՞նչ ազդեցություն ունեցավ ուղից եթերով հեռարձակված սահմանադրության փոփոխությունների պառլամենտական քննարկումները Երեւանի բնակիչների կողմնորոշումների վրա:**

Այս հարցերին պատասխանելու համար «Ընտրական համակարգեր կենտրոնի» Vox Populi-հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը շարունակում է իրականացրել մոնիտորինգային հետազոտություն Երեւան քաղաքի բնակիչների շրջանում: Առաջին հետազոտությունն անցկացվել էր 2004թ. հոկտեմբերի 6-9-ը, երկրորդը՝ 2005թ. ապրիլի 1-3-ը, երրորդը՝ հունիսի 30-ից հուլիսի 2-ը, չորրորդը՝ օգոստոսի 18-22-ը:

Vox Populi-հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնի կողմից իրականացվող մոնիտորինգային հարցումները կարելու են հատկապես Երեւան քաղաքի ընտրողների ընտրական վարքի կանխատեսման տեսանկյունից: Քանզի Երեւանի բնակիչները սովորաբար առավել ընդդիմադիր տրամադրություններ են ունենում եւ նրանց վարքով է պայմանավորելու Սահմանադրության հանրաքվեի ելքը:

Վերջին հարցումն անցկացվել է 2005թ. սեպտեմբերի 2-4-ը, Երեւան քաղաքի 668 (18 եւ ավելի տարիքի) բնակիչների շրջանում: Հարցումը հեռախոսային էր, ընտրանքը՝ բազմաստիճան, պատահական, չկրկնվող:

ԵԹԵ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՔՎԵՆ ԱՆՅՎԱՅԿԻ ԱՌԱՋԻԿԱ ԿԻՐԱԿԻ ՕՐԸ, ԿՄԱՍՆԱԿՑԵՔ ԱՐԴՅՈՋ ՀՆԱՐԱՔՎԵԻ ԶՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ

	2004թ.	2005թ.	2005թ.	2005թ.	2005թ.
	6-9-ը հոկտեմբերի	1-3-ը ապրիլի	2-ը հուլիսի	22-ը օգոստոսի	4-ը սեպտեմբերի
Այո, կմասնակցեմ	9%	10%	13%	12%	13%
ավելի շուտ կմասնակցեմ	13%	9%	16%	15%	11%
ավելի շուտ չեմ մասնակցի	15%	24%	18%	21%	23%
ոչ, չեմ մասնակցի	31%	36%	32%	33%	37%
դժվարանում եմ պատասխանել	32%	21%	21%	19%	16%

**ԳԻՏԵ՞Ք ԱՐԴՅՈՔ ԹԵ ԻՆՉ ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԲԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ**

	2004թ.	2005թ.	2005թ.	2005թ.	2005թ.
	6-9-ը հոկտեմբերի	1-3-ը ապրիլի	2-ը հուլիսի	22-ը օգոստոսի	4-ը սեպտեմբերի
Այո	8%	11%	19%	18%	29%
ոչ	56%	67%	60%	58%	38%
դժվարանում եմ պատասխանել (պատասխան չկա)	36%	22%	21%	24%	33%

Եզրակացություններ:

- ԶԶ ԱԺ-ում ԶԶ Սահմանադրության փոփոխությունների քննարկումների ուղիղ հեռարձակումն ակնհայտ ազդեցություն է ունեցել լսարանի վրա:
- Չնաչաժ կտրուկ աճել է «Սահմանադրական փոփոխությունների մասին իրենց տեղեկացված համարողների» թիվը՝ ընդամենը 12 օրում 18%-ից աճելով մինչև 29%-ի, այնուամենայնիվ, քննարկումները բացասական ազդեցություն են ունեցել Երեւանի բնակիչների ընտրական վարքի վրա: Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ տեղեկացված լինելու մասին հարցին «դժվարանում եմ պատասխանել կամ պատասխան չկա» 33% արձանագրված խմբում զգալի մասը պատասխանից հրաժարվողներն են, ովքեր արդեն որոշել են չմասնակցել հանրաքվեի քվեարկությանը:
- Կտրուկ աճել է աբսենտիստների՝ ընտրություններից հրաժարվողների թիվը: Եթե մի քանի տարի առաջ ըստ մեր հետազոտությունների այս խմբի ընտրողների թիվը միջինը 20%-ի շրջանակներում էր (այս մակարդակը հատկանշական է շատ երկրների համար), ապա սահմանադրական փոփոխություններին նվիրված 2004 եւ 2005թ. մեր հետազոտություններում այդ թիվը հատել է 30%-ի սահմանագիծը: ԶԶ ԱԺ քննարկումների արդյունքում արձանագրվում է ամենաբարձր նիշը՝ 37%:

«Ընտրական համակարգեր կենտրոնի»

Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն

www.expert.am , www.persons.am , www.exclusive.am

mail: voxpopuli@expert.am